ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

Գեորգի Ավետիսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ռուսաստանի Դաշնություն (քաղ. Մոսկվա), 2020 թվականի փետրվարի 11-13-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը.**

Եվրասիական տնտեսական միություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության միջև փոխըմբռնման հուշագրի» իրականացման շրջանակներում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (ԿԱՀԿ) հետ համատեղ 2020 թվականի փետրվարի 12-ին Մոսկվա քաղաքում կազմակերպված հանդիպմանը և 2020 թվականի փետրվարի 13-ին Մոսկվա քաղաքում կազմակերպված Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների անասնաբուժության ոլորտում լիազոր մարմինների ղեկավարների մասնակցությամբ բարձր մակարդակի խորհրդակցությանը

6. **Քննարկված թեմաները.**

Քննարկված թեմաները առնչվում են Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) և հարևան երկրների մաքսային տարածքում առկա էպիզոոտիկ իրավիճակի, Միության անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից՝ կենդանիների հատուկ վտանգավոր հիվանդությունների դեմ պայքարի իրականացմանն ուղղված միջոցառումների, ինչպես նաև ԿԱՀԿ-ի հետ հետագա համագործակցությանը

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հանդիպման ժամանակ քննարկվել են հարցեր հետևյալ թեմաների շուրջ՝

1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում էպիզոոտիկ իրավիճակը (խոզերի աֆրիկական ժանտախտ, խոշոր եղջերավոր կենդանիների նոդուլյար մաշկաբորբ, խոշոր եղջերավոր կենդանիների սպունգաձև էնցեֆալոպաթիա), դրա հետ առնչվող խնդիրների, պայքարի միջոցները:
2. Էլեկտրոնային տարբերակով թողարկված անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի փոխանակման ապահովումը:

3. Միասնական անասնաբուժական պահանջների մեջ փոփոխություններ կատարելու՝ հատկապես խոշոր եղջերավոր կենդանիների սպունգաձև էնցեֆալոպաթիայի մասով հսկողության ենթակա ապրանքների անվտանգությանը ներկայացվող պահանջները:
4. Կենդանիների և կենդանական ծագման արտադրանքների հետագծելիության, գրանցման և նույնականացման իրականացման համաձայնեցված մոտեցումների նախագիծը:
5. Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անասնաբուժական դեղամիջոցների շրջանառության կարգավորման նախագիծը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

---

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

---

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

18.12.2020թ.